



**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԻՑ

# ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՁԵՐ ՔԻՋՆԵՍԸ

ՊԱՐՏԱԴԻՐ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿՃԱՐՆԵՐ

ՀԱՐԿԵՐԸ  
ԵՎ  
ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ

**ՊԱՐՏԱԴԻՐ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱՊԱՇՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿՃԱՐՆԵՐ**

**Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ:** —  
Եր., Դ-ար, 2007, 32 էջ:

Փոքր և միջին բիզնեսով զբաղվողների համար նախատեսված գրքույկն օգտակար և կարևոր տեղեկություններ է պարունակում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների վերաբերյալ՝ ներառելով վերջին երկու տարում դրանց վերաբերող օրենսդրական փոփոխությունները:

*Սույն գրքույկի ցանկացած մաս չի թույլատրվում որևէ կերպ փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
2. ԻՆՉ Է ՊԱՐՏԱԳԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ). ՈՎՔԵՐ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՆԵՐԸ ....	6
3. ՈՎՔԵՐ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ .....	6
4. ՈՐՈՆՔ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՔՅԵԿՏՆԵՐԸ .....	7
5. ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ .....	11
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ .....	13
7. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	15
8. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ .....	19
9. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՇՎԱՌՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ .....	23
10. ԻՆՉՊԻՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ .....	23
11. ԻՆՉՊԻՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱԳԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ.....	24
12. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆԸ.....	27
ՀԱՎԵԼՎԱԾ. ՀՀ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ ՊԱՐՏԱԳԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՐԿԱՅԻՆ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ) ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐԿԱՅԻՆ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ) ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՈՂԵՐԸ .....	28

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պարտադիր սույխալական ապահովագրության վճարները (այսուհետ՝ սույխալական վճարներ), ի տարբերություն հարկերի և այլ պարտադիր վճարների, որոնք անհատույց կատարվող վճարումներ են, հատույվում են վճարողներին՝ կենսաթոշակների, ապահովագրական նպաստների, գործագրկության նպաստների տեսքով: Միաժամանակ, սույխալական վճարների մեծությունն ուղղակիորեն կախված չէ ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների մեծությունից:

Վերջին 2 տարվա ընթացքում պարտադիր սույխալական ապահովագրության վճարների մասին օրենսդրությունը ենթարկվել է որոշակի դրական փոփոխությունների, որոնցից կարևորներն են մասնավորապես.

2005թ-ից սույխալական վճարների հաշվարկման օբյեկտում ներառված են նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների և ծառայությունների մատուցման դիմաց վճարվող եկամուտները (որոնցից, սակայն գործատուներն աշխատողներից 3% պահում չեն կատարում):

Հստակեցվել են սույխալական վճարի օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքերը, այն է՝ սույխալական վճարների հաշվետվություններում (հայտարարագրերում) սույխալական վճարի օբյեկտը ցույց չտալն է, պակաս ցույց տալը կամ սույխալական վճարների օբյեկտներ չառաջանալու մասին կեղծ տվյալներ ներկայացնելը:

2006թ-ից փոխվել է գործատու հասկացությունը, ըստ որի՝ գործատու է համարվում այն անձը, որն իրավասու է ունենալ և փաստացի ունի աշխատող, այլ ոչ թե միայն օժտված է աշխատող ունենալու իրավասությամբ: Այսպիսով, կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները սույխալական վճարների ամսական հաշվետվություններ հարկային մարմին չեն ներկայացնում, եթե հաշվետու ամսում չեն հանդիսանում գործատու (այսինքն՝ չունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված աշխատող):

Գործատուների կողմից հաշվարկվող սույիալական վճարների «նվազագույն շեմը» (մինչև 20.000 դրամ սույիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի դեպքում) կազմում է 7000 դրամ՝ 5000 դրամի փոխարեն:

Գործատուները սույիալական վճարների հաշվետվությունները հարկային մարմին ներկայացնում են յուրաքանչյուր ամիս՝ ՀՀ կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով:

Պարզեցված հարկ վճարողները 2006թ. հունվարի 1-ից սույիալական վճարները կատարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով և դրույթաչափերով:

Պետական գրանցման վկայականն իր հաշվառման հարկային մարմին ժամանակավոր հանձնած և այդ ժամանակահատվածում գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը 5000 դրամ նվազագույն սույիալական վճար չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականի հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Ֆիզիկական անձանց կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում սույիալական վճարների մասով նախատեսված է տուգանքի կիրառում՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տարեկան համախառն եկամտի 10 %-ի չափով (սակայն 60.000 դրամից ոչ պակաս):

Սույիալական վճարների հաշվին գործատուների կողմից վճարվող ապահովագրական նպաստների հաշվարկման և վճարման հարցերը կարգավորված են «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սույիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սույիալական ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 30.03.2006թ. N 571-Ն որոշմամբ:

## 2.

### **ԻՆՉ Է ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ). ՈՎԵՐ ԵՆ ԱՊԱՆՈՎԱԴԻՐՆԵՐԸ**

Սոցիալական վճարները ապահովադիրների կողմից սոցիալական ապահովագրության բյուջե վճարվող **պարտադիր վճարներ են**, որոնց հավաքագրված գումարները պետության կողմից ուղղվում են **կենսաթոշակների, գործազրկության և ապահովագրական նպաստների** վճարմանը:

**Ապահովադիրը** սոցիալական վճարներ կատարող և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե փոխանցող (վճարող) իրավաբանական և ֆիզիկական անձն է, պետական և համայնքային ենթակայության հիմնարկը:

## 3.

### **ՈՎԵՐ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ**

Սոցիալական վճարներ են կատարում՝

- գործատուները,
- վարձու աշխատողները,
- անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

**Գործատուն** քաղաքացիաիրավական հարաբերությունների ցանկացած սուբյեկտն է, ով իր գործունեության իրականացման կամ ապահովման համար իրավունք ունի օրենքով չարգելված աշխատանք առաջարկել ֆիզիկական անձանց, այդ նպատակով պայմանագրեր (աշխատանքային, քաղաքացիաիրավական) կնքելու միջոցով նրանց ներգրավել որոշակի աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման): Գործատու կարող են լինել նաև անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

**Վարձու աշխատողը** աշխատանքային օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, ով աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին անձամբ,

վարձատրության դիմաց կատարում է աշխատանքային (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում) գործառույթներ՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքի պայմաններ:

Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող **օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք** (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները) սոցիալական վճարներ կատարելու պարտականությունից **ազատված են**:

Սոցիալական վճարների կատարման պարտականությունից **ազատված են նաև** օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքն օգտագործող **գործատուները՝ նրանց մասով**:

Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող օտարերկրյա իրավաբանական անձինք, դրանց կողմից ստեղծված կազմակերպությունները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրենց մոտ աշխատանք կատարող Հայաստանի Հանրապետության **քաղաքացիների համար** սոցիալական վճարները կատարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

## 4.

### **ՈՐՈՆՔ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ԸՆԾՎԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ**

Սոցիալական վճարների **հաշվարկման օբյեկտներն են**.

- աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների վճարմանն ուղղվող միջոցները (ԱՎՈՒՄ)).



- անհատ ձեռնարկատերերի և նոտարների տարեկան համախառն եկամուտները, որոնցից նախապես նվազեցվում են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված եկամտի առանձին տեսակների ստացման հետ կապված ծախսերի (այդ թվում՝ նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը) և նվազեցվող եկամուտների գումարը՝ առանց հաշվի առնելու անձնական նվազեցումները:

### **Ուշադրություն**

*պարզեցված հարկ վճարող անհատ ձեռնարկատերերը, սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտի որոշման ժամանակ, համախառն եկամտից նվազեցնում են գործունեության հետ կապված և փաստաթղթերով (այդ թվում՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով) հիմնավորված ծախսերը:*

Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների) ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.06.1998թ, N 352 որոշմամբ, համաձայն որի՝ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ և դրանց հավասարեցված եկամուտներ են համարվում՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության համապատասխան որոշակի ժամկետով (անձնական բնույթի ծառայություններ մատուցելու մասին, տնաշխատների հետ, համատեղությամբ, ժամանակավոր (մինչև 2 ամիս ժամկետով), սեզոնային) և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վճարումները (վարձատրությունը)՝

ա) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն), ներառյալ՝

- արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,
- գիշերային աշխատանքի վարձատրությունը,
- ոչ աշխատանքային (հանգստյան, տոնական, հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,

- լրավճարները, հավելավճարները (այդ թվում՝ դասային և հատուկ կոչումների, գիտական աստիճանների համար) և պարզևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),
  - աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման և օգնության գումարների),
  - պարապուրդի ժամանակ վճարումը,
  - օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,
  - լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,
  - առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով),
  - աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ այլ վայրում աշխատանքի ընդունվելու դեպքում տեղափոխման համար նախապատրաստվելու և նոր վայրում տեղավորվելու ժամանակահատվածի համար վարձատրությունը.
- բ) ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) տրամադրվող վճարովի արձակուրդի համար, ինչպես նաև աշխատողին աշխատանքից ազատելու ժամանակ ամենամյա արձակուրդի տրամադրման դեպքում վճարվող աշխատավարձը.
- գ) նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձը.
- դ) հեղինակային վարձատրությունը (բացառությամբ ռոյալթիների).
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում անհատ ձեռնարկատեր չհանդի-

սացող ֆիզիկական անձի կողմից կատարվող աշխատանքներից և մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտները, մասնավորապես՝

- կապալի (այդ թվում՝ շինարարական, նախագծային և հետագոտական աշխատանքների կապալի) պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- մանկավարժական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- հանձնարարության և գործակալության պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը,
- պահատվության պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը,
- փոխադրման և տրանսպորտային առաքման պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը:

**Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա գիտական և ստեղծագործական աշխատանքների դիմաց եկամուտները չեն դիտվում որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված կամ դրանց հավասարեցված եկամուտներ:**

### **Ուշադրություն**

*օգնության և փոխհատուցման գումարներից, ռոյալթիներից, վարձակալական և փոխառության դիմաց վճարներից (վարձավճար, տոկոս և այլ հատուցում), քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա գիտական և ստեղծագործական աշխատանքների դիմաց վճարված եկամուտներից սոցիալական վճարներ չեն կատարվում:*

Բնաիրային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները սոցիալական վճարների օբյեկտում հաշվի են առնվում պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազատ (շուկայական) գներով (*Հայաստանի Հանրապետության կառավարության 08.06.1998թ. N 352 որոշման հավելված 2*):

Արտարժույթով (օտարերկրյա արժույթով) ստացված եկամուտները և ծախսերը սույնիսկական վճարների օբյեկտի հաշվարկման համար վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ելնելով դրանց ստացման (հաշվարկման) օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած արտարժույթային փոխարժեքից:

## 5. ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**Գործատուները** յուրաքանչյուր աշխատողի համար սույնիսկական վճարները կատարում են հետևյալ դրույքաչափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 20,0 հազ. դրամ	7,0 հազ. դրամ
20,0 հազ. դրամից մինչև 100,0 հազ. դրամ	7,0 հազ. դրամ գումարած 20,0 հազ. դրամը գերազանցող գումարի 15%-ը
100,0 հազ. դրամից ավելի	19,0 հազ. դրամ գումարած 100,0 հազ. դրամը գերազանցող գումարի 5%-ը

Սույնիսկական վճարները հաշվարկվում է **յուրաքանչյուր** գործատու՝ առանց հաշվի առնելու այլ գործատուների կողմից աշխատողի համար կատարված սույնիսկական վճարները:

Գործատուների մոտ աշխատանքային պայմանագրերի հիման վրա աշխատանք կատարող վարձու աշխատողները սույնիսկական վճարներ են կատարում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների **3%-ի չափով**, որոնց պահումները կատարում և ապահովագրության բյուջե են փոխանցում գործատուները:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա աշխատանքներ կատարող և ծառայություններ մատուցող աշխատողներին վճարվող եկամուտներից գործատուները, ինչպես նաև աշխատողները, **3%-ի պահում չեն կատարում**:

**Անհատ ձեռնարկատերերը և նոտարները** սույիալական վճարները կատարում են հետևյալ դրույթաչափերով.

<b>Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափը</b>	<b>Սոցիալական վճարի չափը</b>
մինչև 1200,0 հազ. դրամ	15%, բայց ոչ պակաս 60,0 հազ. դրամից
1200,0 հազ. դրամից ավելի	180,0 հազ. դրամ գումարած 1200,0 հազ. դրամը գերազանցող գումարի 5%-ը

Անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել **նվազագույն** սույիալական վճար՝ **5000 դրամ**: Ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը, պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու դեպքում, վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև այն հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սույիալական վճար չի կատարում:

### **ՕՐԻՆԱԿ**

Պետական գրանցման վկայականը հարկային մարմին 2006թ. մարտի 20-ին ժամանակավորապես հանձնած, 2006թ. նոյեմբերի 10-ին հետ ստացած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը ամսական նվազագույն սույիալական վճարներ չի կատարում 2006թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսների համար:

### **Ուշադրություն**

**պարզեցված հարկ վճարողները, այդ թվում անհատ ձեռնարկատերերը և նոտարները, 2006թ. հունվարի 1-ից սույիալական վճարները կատարում են ընդհանուր սահմանված կարգով, այսինքն՝ վերը նշված դրույթաչափերով:**

## 6.

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԸՆԾՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

**Գործատուները** յուրաքանչյուր ամսվա համար սոցիալական վճարները հաշվարկում և ապահովագրության բյուջե են փոխանցում (վճարում) մինչև **հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ)**:

**Գործատուները**, յուրաքանչյուր հաշվետու ամսվա արդյունքներով, **մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ)**, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին պարզեցված ընթացակարգով (այդ թվում՝ փոստով, ՀՀ կառավարության 16.02.2006թ. N 471-Ն որոշում) ներկայացնում են սոցիալական վճարների **հաշվետվություն**, որտեղ ներառվում են նաև սոցիալական վճարների հաշվին գործատուի կողմից հաշվետու ամսում վճարված ապահովագրական նպաստները: Կազմակերպությունները հաշվետվություն հարկային մարմին չեն ներկայացնում, եթե հաշվետու ամսում չեն հանդիսանում գործատու, այսինքն՝ չունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված աշխատող:

Եթե օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սոցիալական վճարները հաշվարկելու և վճարելու պարտականությունը դրված է վարձու աշխատողների վրա (միայն 3%-ի մասով), ապա գործատուն պարտավոր է մինչև յուրաքանչյուր եռամսյակին **հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ)** ներկայացնել սահմանված ձևի **տեղեկություններ**՝ վարձու աշխատողների և նրանց վճարված եկամուտների մասին:

Տվյալ ամսում աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում եկամուտների գծով առ **2003 թվականի ապրիլի 1-ը** պարտքերը վճարելու դեպքում գործատուները դրանց գծով հաշվարկված սոցիալական վճարները (հաշվարկային պարտքերը) վճարում են մինչև այդ ամսվա **հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ)**:

**Անհատ ձեռնարկատերերը** (անկախ գործունեություն իրականացնելու հանգամանքից, բացառությամբ պետական գրանցման

վկայականը հարկային մարմին ժամանակավոր հանձնման ղեպքերի) և նոտարները յուրաքանչյուր ամսվա համար նվազագույն սույիալական վճարները ապահովագրության բյուջե են փոխանցում մինչև **հաջորդ ամսվա 15-ը**, իսկ հաշվետու տարվա համար հաշվարկված սույիալական վճարների և ամսական նվազագույն սույիալական վճարների հանրագումարի **դրական տարբերությունը** ապահովագրության բյուջե են փոխանցում (վճարում) մինչև հաջորդ **տարվա մարտի 1-ը (ներառյալ)**:

Նրանք, մինչև **հաջորդ տարվա մարտի 1-ը**, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում **հայտարարագիր**:

Սույիալական վճարները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ արտարժույթով վճարվող (վճարված, փոխանցված) սույիալական վճարների գումարները վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ վճարման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած արտարժույթային փոխարժեքին համապատասխան: Ընդ որում՝ սույիալական վճարների կատարման օր է համարվում ապահովագրության բյուջեն սպասարկող բանկի հաշվին գումարների մուտքագրման օրը:

Լուծարվող ապահովադիրները հաշվետվությունը (հայտարարագիրը) ներկայացնում և սույիալական վճարները կատարում են **մինչև** լուծարման **գործընթացի ավարտն** ընկած ժամանակաշրջանի համար:

Ապահովադիրները, հաշվետվությունը (հայտարարագիրը) սահմանված ժամկետներում ներկայացնելուց հետո, իրավունք ունեն ճշգրտումներ մտցնել դրանցում արտապուրված տվյալներում՝ ներկայացնելով **ճշտված հաշվետվություն** (հայտարարագիր), **բացառությամբ** ստուգված կամ ստուգվող ժամանակաշրջաններին վերաբերող հաշվետվությունների (հայտարարագրերի): **Ստուգված ժամանակաշրջանների համար** սույիալական վճարների գծով պարտավորությունները կարող են ճշտվել **միայն** ապահովադրի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Ավել վճարված կամ գանձված սույիալական վճարների գումարները **հաշվանցվում են** հաշվարկված տույժերի, տուգանքների,

առաջիկա սույիալական վճարների դիմաց կամ վերադարձվում են վճարողին Հայաստանի Հանրապետության սույիալական ապահովագրության պետական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից՝ հարկային մարմին դիմելու օրվանից՝ 30 օրվա ընթացքում:

Սույիալական վճարների կատարման և սույիալական վճարների գծով հաշվարկված տույժերի ու տուգանքների վճարման արտոնությունները սահմանվում են միայն օրենքով:

## **7.**

### **ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ՇԱԶՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԿՃԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գործատուները, աշխատանքային պայմանագրերի շրջանակներում իրենց մոտ վարձու աշխատողներին վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրան հավասարեցված եկամուտներից, յուրաքանչյուր ամիս սույիալական վճարները հաշվարկում են տվյալ ամսվա համար հաշվարկված (հաշվարկման ենթակա) եկամուտներից՝ անկախ վճարման կամ չվճարման հանգամանքից:

#### **Ուշադրություն**

---

*ԱՎՈՒՄ-ից, որոնք չեն վերաբերում կոնկրետ ամսին, սույիալական վճարները հաշվարկվում են այն ամսվա համար, երբ կատարվել է այդ եկամուտների հաշվարկումը:*

---

**Ամենամյա արձակուրդի համար վճարվող աշխատավարձից սույիալական վճարներ հաշվարկելիս կարևոր է իմանալ հետևյալը.**

- Ամենամյա արձակուրդի ընթացքում պահպանվում է վարձու աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով:



- Միջին աշխատավարձի հաշվարկման համար հաշվի են առնվում աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները (այդ թվում՝ լրավճարներ, հավելավճարներ, պարգևատրումներ, միանվագ վճարներ (բացառությամբ օգնության գումարների)), որոնք վճարվում են տվյալ գործատուի մոտ՝ անկախ վճարման աղբյուրներից (բացառությամբ այն պարգևատրումների, որոնք տվյալ գործատուի տնտեսական կամ այլ գործունեության տարեկան արդյունքների հիման վրա այլ գործատուներ տվել են տվյալ գործատուի մոտ վարձու աշխատող անձանց):
- Միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է միջին ամսական աշխատավարձը բաժանելով մեկ ամսվա օրացույցային օրերի միջին թվի վրա (30.4): Միջին ամսական աշխատավարձի չափը որոշվում է օրենսդրությամբ սահմանված կարգով (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 195):
- Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 28 օրացույցային օր է: Վարձու աշխատողի ցանկությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով: Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ տարում՝ օրենքով սահմանված կարգով:
- Ամենամյա արձակուրդից հետ կանչելը կատարվում է վարձու աշխատողի համաձայնությամբ: Ամենամյա արձակուրդի տեղափոխումը (մինչև ամենամյա արձակուրդի սկսվելը կամ ամենամյա արձակուրդի ընթացքում) կատարվում է վարձու աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում: Ամենամյա արձակուրդի չօգտագործված (տեղափոխված) մասը տրամադրվում է նույն տարում, իսկ վարձու աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ կարող է տեղափոխվել և միացվել հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին:
- Չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատույցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով:

- Տարբեր գործատուների մոտ համատեղությամբ աշխատողների ամենամյա վճարովի արձակուրդը տրամադրվում է հիմնական աշխատավայրում տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ: Սեզոնային կամ ժամանակավոր աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողներին հատկացվում է վճարովի արձակուրդ կամ պայմանագիրը լուծելիս վճարվում է հատույում՝ յուրաքանչյուր ամսվա համար 2 աշխատանքային օրվա հաշվարկով

## **Ուշադրություն**

*հատույման գումարներից սոցիալական վճարներ չեն հաշվարկվում:*

Ամենամյա արձակուրդի վճարումների դեպքում սոցիալական վճարները հաշվարկվում և վճարվում են **ընդհանուր կարգով:**

## **Օրինակ**

Վարձու աշխատողը գնում է հերթական (ամենամյա) արձակուրդ 2006թ. օգոստոսի 21-ին և վերադառնում է 2006թ. սեպտեմբերի 18-ին (արձակուրդի տևողությունը՝ 28 օրացույցային օր): Արձակուրդային գումարը հաշվարկվել է 80,000 դրամի չափով, իսկ օգոստոս և սեպտեմբեր ամիսների աշխատավարձը կազմում է ամսական 70,000 դրամ:

Այս դեպքում յուրաքանչյուր ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով տվյալ ամսվա աշխատավարձից և այդ ամսվան վերաբերող արձակուրդային գումարի ընդհանուր գումարից (ԱՎՈՒՄ):

**Օգոստոս ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը կլինի՝**

- Օգոստոս ամսվա աշխատավարձը և արձակուրդայինը (ԱՎՈՒՄ)՝  
 $(70,000 \text{ դրամ} : 31 \text{ օր} \times 20 \text{ օր}) + (80,000 \text{ դրամ} : 28 \text{ օր} \times 11 \text{ օր}) = 76,590 \text{ դրամ},$
- Գործատուի օգոստոս ամսվա սոցիալական վճարը՝  
 $7,000 \text{ դրամ} + (76,590 \text{ դրամ} - 20,000 \text{ դրամ}) \times 15\% = 15,488 \text{ դրամ},$
- Վարձու աշխատողի համար սոցիալական վճարը՝  
 $76,590 \times 3\% = 2,298 \text{ դրամ},$

**Ընդամենը օգոստոս ամսվա սոցիալական վճար՝**  $15,488 + 2,298 = 17,786 \text{ դրամ:}$

Մեպտեմբեր ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը կլինի՝

- Մեպտեմբեր ամսվա աշխատավարձը և արձակուրդայինը (ԱՎՈՒՄ)՝  $(70,000 \text{ դրամ} : 30\text{օր} \times 13\text{օր}) + (80,000 \text{ դրամ} : 28\text{օր} \times 17\text{օր}) = 78, 905 \text{ դրամ},$
- Գործատուի սեպտեմբեր ամսվա սոցիալական վճարը՝  $7,000 \text{ դրամ} + (78, 905 \text{ դրամ} - 20, 000 \text{ դրամ}) \times 15\% = 15, 836 \text{ դրամ},$
- Վարձու աշխատողի համար սոցիալական վճարը՝  $78, 905 \times 3\%=2, 367 \text{ դրամ},$

**Ընդամենը սեպտեմբեր ամսվա սոցիալական վճար՝  $15, 836 + 2, 367 = 18,203$  դրամ:**

Օգոստոս ամսվա ԱՎՈՒՄ-ը և սոցիալական վճարները արտասուվում են այդ ամսվա հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները ենթակա են վճարման մինչև 20.09.2006թ (ներառյալ), իսկ սեպտեմբեր ամսվա ԱՎՈՒՄ-ը՝ այդ ամսվա հաշվետվությունում, և սոցիալական վճարը ենթակա է վճարման մինչև 20.10.2006թ (ներառյալ):

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում.

ա) մասնավորապես՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում, գործատուն վարձու աշխատողին վճարում է արձակման նպաստ՝ օրենքով սահմանված կարգով և չափերով (առնվազն մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով, իսկ առանձին դեպքերում՝ 2 շաբաթվա աշխատավարձի չափով, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրական աշխատավարձի չափից ելնելով ( $\llcorner$  աշխատանքային օրենսգիրք, հոդված 113)):

### **Ուշադրություն**

*վարձու աշխատողին վճարվող արձակման նպաստից գործատուների կողմից սոցիալական վճարներ չեն հաշվարկվում.*

բ) գործատուն պարտավոր է վարձու աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե օրենքով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված կարգով հաշվարկված վճարները չեն հաշվարկվում:

նագրով այլ կարգ նախատեսված չէ՝ վերջնահաշվարկի օրը վճարելով աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները:

## **8.**

### **ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՇԱԾԿԻՆ ԱՊԱՇՏՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՇԱԾՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

Գործատուները, յուրաքանչյուր ամսվա սույնիսկական վճարների հաշվին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով հաշվարկում ու վարձու աշխատողներին վճարում են **ապահովագրական նպաստներ** (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հոլիոթյան և ծննդաբերության նպաստ, թաղման նպաստ), իսկ սույնիսկական վճարների և վճարված նպաստների տարբերության գումարները փոխանցում են ապահովագրության բյուջե:

Ապահովագրական նպաստների ստացման իրավունք ունեն գործատուների մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք, ովքեր ենթակա են պարտադիր սույնիսկական ապահովագրության և որոնց համար սահմանված կարգով սույնիսկական վճարներ են կատարվում ապահովագրության բյուջե: Ապահովագրական նպաստները տրվում են, եթե դրանց ստանալու իրավունքն առաջացել է աշխատանքի ժամանակաշրջանում (ներառյալ՝ փորձաշրջանը): Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող օտարերկրացիները ապահովագրական նպաստների իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար՝ իրենց կողմից Հիմնադրամ կամավոր սույնիսկական վճարներ կատարելու պարտավորություն ստանձնելու մասին դիմումի առկայության և օրենքով սահմանված կարգով սույնիսկական վճարներ կատարելու դեպքում:

Համատեղությամբ աշխատելու դեպքում վարձու աշխատողին ապահովագրական նպաստ նշանակելու համար հիմնական

աշխատավայրի գործատուի համար հիմք է հանդիսանում ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, իսկ մյուս գործատուի (գործատուների) համար՝ հիմնական աշխատավայրի գործատուի կողմից կնքված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի պատճենը: Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողին ժամանակավոր անաշխատունակության դեպքերում ապահովագրական նպաստ տրվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (բայց ոչ ավելի, քան մինչև աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը), եթե նա վերջին մեկ տարվա ընթացքում, մինչև ժամանակավոր անաշխատունակության առաջացումը աշխատել է 3 ամսից ոչ պակաս կամ վերջին 2 տարվա ընթացքում՝ 10 ամսից ոչ պակաս:

Ապահովագրական նպաստները հաշվարկվում են վարձու աշխատողի միջին աշխատավարձից (եկամտից): Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացույցային ամիսներին տվյալ աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից, որոնցից, օրենքով սահմանված կարգով կատարվել են սույնիսկան վճարներ: Եթե ապահովագրական դեպքին նախորդող եռամսյա ժամանակաշրջանում վարձու աշխատողը եկամուտ չի ունեցել (աշխատավարձ չի ստացել), ապա որպես միջին ամսական աշխատավարձ (եկամուտ) հիմք է ընդունվում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասներեքապատիկը: Եթե ապահովագրական դեպքին նախորդող, տվյալ գործատուի մոտ, աշխատանքի ժամանակաշրջանը պակաս է 3 օրացույցային ամիսներից, ապա միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է փաստացի աշխատած ամիսների (օրերի) համար հաշվարկված եկամտից:

Հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստները հաշվարկելիս հիմք ընդունվող միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով, եթե այն չի գերազանցում 100,0 հազ. դրամը, իսկ 100,0 հազ. դրամը գերազանցելու դեպքում՝ 100,0 հազ. դրամին գումարած 100,0 հազ. դրամը գերազանցող գումարի 30%-ը :

Ընդ որում՝ այս ձևով հաշվարկված միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով այն աշխատողների համար, ովքեր՝

- ունեն 8 և ավելի տարվա ապահովագրական (աշխատանքային) ստաժ, կամ
- իրենց խնամքի տակ ունեն 18 տարին չլրացած հաշմանդամ երեխա կամ 3 և ավելի երեխա,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-ից 23 տարեկան անձինք են,
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մարտական գործողությունների մասնակիցներ են, կամ
- Չերնոբիլի ԱԷԿ-ի վթարը վերացնելու ընթացքում հաշմանդամ են դարձել (անկախ ապահովագրական ստաժից),

իսկ 80%-ի չափով՝ այն աշխատողների համար, ովքեր ունեն մինչև 8 տարվա ապահովագրական (աշխատանքային) ստաժ):

Հղիության ու ծննդաբերության նպաստը հաշվարկելիս հիմք ընդունվող միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով՝ անկախ ապահովագրական ստաժի տևողությունից և աշխատավարձի չափից (առանց կիրառելու աշխատավարձի չափի հետ կապված վերը նշված սահմանափակումները): Ապահովագրական նպաստները հաշվարկելու համար միջին աշխատավարձը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) վրա և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացույցային օրերի թվով (30.03.2006թ. ՀՀ կառավարության «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 571-Ն որոշում):

Վարձու աշխատողների ապահովագրական նպաստի հաշվարկումը, նշանակումը և վճարումը իրականացնում է գործատուն: Ապահովագրական նպաստը վճարվում է դրա նշանակումից հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված բոլոր վարձու աշխատողների սոցիալական վճարների ընդհանուր գումարը բավարար չէ, ապա գործատուն ապահովագրական նպաստը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է Հիմնադրամը՝

գործատուի կողմից սույնիսկական վճարների վերաբերյալ ամսական հաշվետվության հետ մեկտեղ հարկային մարմին ներկայացված համապատասխան տեղեկանքի (ձևը սահմանված է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սույնիսկական հարցերի նախարարի 09.07.2006թ. N 124-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 04.07.2006թ. N 1-05/11-Ն և Հայաստանի Հանրապետության սույնիսկական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահի 03.07.2006թ. N 88-Ն համատեղ հրամանով) հիման վրա՝ հարկային մարմնի հաստատած տեղեկանքը Հիմնադրամ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում: Եթե գործատուն օրենքով ազատված է սույնիսկական վճարներ կատարելու պարտավորությունից, ապա ապահովագրական նպաստները վճարվում են գործատուի միջոցների հաշվին, որը Հիմնադրամի կողմից չի փոխհատուցվում: Գործատուի վերակազմակերպման դեպքում վարձու աշխատողներին ապահովագրական նպաստ նշանակում և վճարում է նրա իրավահաջորդը, իսկ լուծարման դեպքում՝ Հիմնադրամը:

Սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված ապահովագրական նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման, ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված ապահովագրական նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից:

Անհատ ձեռնարկատերերի և նոտարների ապահովագրական նպաստները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով հաշվարկում և վճարում է Հիմնադրամը:

## 9.

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՐԱԶՎԱՌՎՈՒԽ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

Ապահովադիրները պետական գրանցում ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են հաշվառվել հարկային մարմնում (Հայաստանի Հանրապետության կառավարության 08.06.1998թ. N 352 որոշման հավելված 3):

Ապահովադիրները հաշվառվում են ըստ պետական գրանցման կամ ըստ հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառվելու վայրի:

Ինքնուրույնաբար սույիալական վճարներ կատարող վարձու աշխատողները, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով և միջազգային պայմանագրերով սույիալական վճարները հաշվարկելու և Հայաստանի Հանրապետության պարտադիր սույիալական ապահովագրության բյուջե փոխանցելու պարտավորությունը դրված է նրանց վրա, որպես ապահովադիր, հաշվառվում են հարկային մարմնում:

## 10.

### ԻՆՉՊԻՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

Սույիալական վճարներ կատարողները՝

1. իրավունք ունեն՝

ա) մասնակցել ստուգումներին, ծանոթանալ իրենց մոտ կատարված ստուգման ակտերին և ստանալ դրանց մեկ օրինակը, որոնց հետ չհամաձայնելու դեպքում, ակտն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, ներկայացնել գրավոր առարկություններ կամ այն բողոքարկել դատական կարգով.

բ) բողոքակել հարկային մարմնի պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունները.



- զ) հարկային մարմնի ստանալ պարզաբանումներ՝ սոցիալական վճարների հաշվարկման և վճարման մասին.
- դ) պահանջել և ստանալ կամ հաշվանցել ապագա վճարումների հաշվին ավել վճարված կամ գանձված սոցիալական վճարների գումարները:

2. պարտավոր են՝

- ա) հաշվառվել հարկային մարմնում.
- բ) հարկային մարմնին ներկայացնել հաշվետվություններ, հայտարարագրեր.
- գ) ներկայացնել արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող համապատասխան փաստաթղթեր:

# 11.

## ԻՆՉՊԻՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՇՏՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՆՋՆԵՐԻ ԽԱՄՏՄԱՆ ԴԵՊՈԸՄ

Օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սոցիալական վճարները հաշվարկելու և վճարելու պարտականությունը վարձու աշխատողների վրա դրված լինելու դեպքում, գործատուների կողմից նախատեսված տեղեկությունները չներկայացնելու համար գործատուն վճարում է **տուգանք**՝ հարկային մարմին չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար **25,0 հազ. դրամի** չափով:

Սոցիալական վճարումների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված) կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ապահովագրից գանձվում է **տույժ**՝ ապառքի **0,15%-ի** չափով:

Սոցիալական վճարների վճարումը ուշացնելու դեպքում լիազոր մարմինը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի, սոցիալական վճարի վճարման համար սահմանված ժամկետից՝ **183 օրվա** ընթացքում, սահման-

ված կարգով ապահովադրին անվճարունակ ճանաչելու **հայրով** դիմում է դատարան:

Սոցիալական վճարների օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում ապահովադրից, օրենքով սահմանված կարգով, գանձվում է թաքցրած կամ պակաս ցույց տված սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված (լիազորված մարմնի կողմից) սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի **50 տոկոսի** չափով, իսկ լիազորված մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ նեկ տարվա ընթացքում, սոցիալական վճարների օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ սոցիալական վճարների **ամբողջ գումարի** չափով:

Սոցիալական վճարների օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը հարկային մարմին ներկայացված սոցիալական վճարների հաշվետվություններում (հայտարարագրերում) սոցիալական վճարների օբյեկտը ցույց չտալն է, պակաս ցույց տալը կամ սոցիալական վճարների օբյեկտներ չառաջանալու մասին կեղծ տվյալներ ներկայացնելը:

Ապահովադիրների՝ հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունը (հայտարարագիրը) սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար ապահովադրից գանձվում է **տուգանք**՝ դրա հետևանքով չմուծված սոցիալական վճարի ընդհանուր գումարի **5 տոկոսի** չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի ընդհանուր գումարն է:

Սոցիալական վճարների հաշվետվությունները (հայտարարագրերը) սխալ կազմելու համար ապահովադիրներից գանձվում է **տուգանք**՝ այդ խախտումների հետևանքով Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե չմուծված կամ պակաս մուծված սոցիալական վճարի գումարի **10 տոկոսի** չափով:

Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի) բացակայության փաստն արձանագրելու դեպքում գործատուն արձանագրման ամսում հաշվարկում և վճարում է չձևակերպված աշխատանքի

տողի համար սոցիալական վճար՝ **60,0 հազ. դրամի** չափով, որը արտացոլվում է տվյալ ամիսը ներառող հաշվետվությունում:

Խախտումներ հայտնաբերելու դեպքում սոցիալական վճարների գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվանից երեք տարի հետո:

Ապահովադիրները թաքցրած կամ պակաս ցույց տված սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև հաշվարկված տույժերը և տուգանքները վճարում են ստուգման ակտ ներկայացնելուց հետո՝ **10-օրյա** ժամկետում:

Սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ ապահովադիրի գույքը **քոնսզանձելու** նպատակով:

Եթե ստուգման ժամանակ ապահովադիրը չի ներկայացնում սոցիալական վճարների հաշվարկման համար հիմք համարվող փաստաթղթերը կամ կեղծ տվյալներ է մտցնում այդ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում սոցիալական վճարները հաշվարկելը, ապա սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարները **հաշվարկում է հարկային մարմինը**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Առանց պետական գրանցման ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը դիտվում է որպես ապօրինի գործունեություն, որի համար հաշվարկվում է տուգանքը այդ գործունեության արդյունքում անհատ ձեռնարկատերերի համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի **10%-ի չափով** (բայց 60,0 հազ. դրամից ոչ պակաս), որն ապօրինի գործունեություն իրականացնողների համար ապօրինի գործունեության մասով սոցիալական վճարների վերջնական պարտավորություն է: Այդ դեպքում ևս համախառն եկամուտը որոշվում է հարկային մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պարտադիր սոցիալական ապահովագրության օրենսդրության պահանջների իրավախախտումներ թույլ տված ապահովադիրների պաշտոնատար և պատասխանատու անձինք ենթարկվում են

վարչական պատասխանատվության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն:

## **12.**

### **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՊԱՇՏՎՈՂ ՄԱՐՄԻՆԸ**

Սոցիալական վճարների հավաքագրումը, գանձումը և հսկողությունը, սոցիալական վճարների մասով Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի մուտքերն ապահովում է լիազորված մարմինը, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը:

**ԸՆԴՀԱՆՈՒՄԻՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ՇՆՅԱԿ ԸԱՍԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԸՈՐԿԱՅԻՆ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ) ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՈՐԿԱՅԻՆ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ) ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԿՈՂԵՐԸ**

ԸՆԿՐԱԿԱՆ ԿՈՄՊԱՆԻԱՆ ԿՐԻՏԵՐԻԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՎՈՐՈՒՄՆԵՐ)	ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆԵՐ	ԸՆԿՐԱԿԱՆ ԿՈՄՊԱՆԻԱՆ ԿՐԻՏԵՐԻԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՎՈՐՈՒՄՆԵՐ)	ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆԵՐ
Խոշոր հարկ վճարողների ՀՏ	900009900029	Գյումրու ՀՏ	900009902124
Ակցիզային հարկ վճարողների ՀՏ	900009900011	Գորիսի ՏՀՏ	900009902819
Բանկերի և վարկային կազմակերպությունների ՀՏ	900009900037	Գիլիջանի ՏՀՏ	900009904013
Հանքարտադրողների ոլորտային ՀՏ	900009900045	Եղեգնաձորի ՏՀՏ	900009903510
Արաբկիրի ՀՏ	900009900318	Էջմիածնի ՏՀՏ	900009903213
Արաբկիրի 1 ՀՏ	900009900359	Թալինի ՏՀՏ	900009904617
Էրեբունու ՀՏ	900009900219	Թումանյանի ՏՀՏ	900009902611
Խորհրդայինի ՀՏ	900009900334	Իջևանի ՏՀՏ	900009903718
Մաշտոցի ՀՏ	900009900524	Կապանի ՏՀՏ	900009903114
Սպանդարյանի ՀՏ	900009900128	Կոտայքի ՏՀՏ	900009901019
Սպանդարյանի 1ՀՏ	900009900136	Հրազդանի ՏՀՏ	900009901217
Մյասնիկյանի ՀՏ	900009900110	Մասիսի ՏՀՏ	900009904310
Շահումյանի ՀՏ	900009900532	Մարտունու ՏՀՏ	900009901415
Շենգավիթի ՀՏ	900009900227	Մեղրու ՏՀՏ	900009903015
Քանաքեռ-Զեյթունի ՀՏ	900009900326	Նաիրիի ՏՀՏ	900009901118

Ավանի ՀՏ	900009900342	Նոյեմբերյանի ՏՀՏ	900009903916
Դավթաշենի ՀՏ	900009900516	Չարենցավանի ՏՀՏ	900009901316
Նորք-Մարաշի ՀՏ	900009900144	Սալիտակի ՏՀՏ	900009902413
Աշտարակի ՏՀՏ	900009904419	Ստեփանավանի ՏՀՏ	900009902512
Ախուրյանի ՏՀՏ	900009902132	Սիսիանի ՏՀՏ	900009902918
Անիի ՏՀՏ	900009902116	Սևանի ՏՀՏ	900009901613
Ապարանի ՏՀՏ	900009904518	Վայքի ՏՀՏ	900009903411
Արարատի ՏՀՏ	900009904211	Վանաձորի ՀՏ	900009902314
Արթիկի ՏՀՏ	900009902017	Վարդենիսի ՏՀՏ	900009901514
Արմավիրի ՏՀՏ	900009903312	Տաշիրի ՏՀՏ	900009902710
Արտաշատի ՏՀՏ	900009904112	Տավուշի ՏՀՏ	900009903817
Գավառի ՏՀՏ	900009901712		

ԸՆ ԿԱ ԸՊԾ հարկային տեսչություններ (մարմիններ) <sup>1</sup>	Կող	ԸՆ ԿԱ ԸՊԾ հարկային տեսչություններ (մարմիններ)	Կող
Խոշոր հարկ վճարողների ՀՏ	23	Գյումրու ՀՏ	21
Ակցիզային հարկ վճարողների ՀՏ	33	Գորիսի ՏՀՏ	89
Բանկերի և վարկային կազմակերպությունների ՀՏ	66	Դիլիջանի ՏՀՏ	42
Հանքարտադրողների ոլորտային ՀՏ	46	Եղեգնաձորի ՏՀՏ	56
Արարկիրի ՀՏ	11	Էջմիածնի ՏՀՏ	82
Արարկիրի 1 ՀՏ	38	Թալինի ՏՀՏ	52

<sup>1</sup> հաստատված Է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» 21.11.2002թ, N1926-Ն որոշման N2 հավելվածով:

Էրեբունու ՀՏ	12	Թումանյանի ՏՀՏ	32
Խորհրդայինի ՀՏ	13	Իջևանի ՏՀՏ	41
Մաշտոցի ՀՏ	14	Կապանի ՏՀՏ	86
Սպանդարյանի ՀՏ	18	Կոտայքի ՏՀՏ	62
Սպանդարյանի 1ՀՏ	40	Հրազդանի ՏՀՏ	61
Մյասնիկյանի ՀՏ	15	Մասիսի ՏՀՏ	94
Շահումյանի ՀՏ	16	Մարտունու ՏՀՏ	73
Շենգավիթի ՀՏ	17	Մեղրու ՏՀՏ	87
Քանաքեռ-Զեյթունի ՀՏ	10	Նաիրիի ՏՀՏ	63
Ավանի ՀՏ	37	Նոյեմբերյանի ՏՀՏ	44
Գավթաշենի ՀՏ	39	Չարենցավանի ՏՀՏ	64
Նորք-Մարաշի ՀՏ	45	Սպիտակի ՏՀՏ	35
Աշտարակի ՏՀՏ	51	Ստեփանավանի ՏՀՏ	34
Ախուրյանի ՏՀՏ	22	Սիսիանի ՏՀՏ	88
Անիի ՏՀՏ	24	Սևանի ՏՀՏ	74
Ապարանի ՏՀՏ	53	Վայքի ՏՀՏ	57
Արարատի ՏՀՏ	92	Վանաձորի ՀՏ	31
Արթիկի ՏՀՏ	26	Վարդենիսի ՏՀՏ	75
Արմավիրի ՏՀՏ	81	Տաշիրի ՏՀՏ	36
Արտաշատի ՏՀՏ	91	Տավուշի ՏՀՏ	43
Գավառի ՏՀՏ	71		





ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ  
ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱՊԱՇՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՃԱՐՆԵՐ

---

Մինչտպագրական աշխատանքներ՝ «ԳԱՐ» ՍՊԸ  
Տպագրություն՝ «ԷԳԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ  
Տպաքանակ՝ 20 000